

**ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ¹**

Արագածոտնի մարզը, կազմավորվելով 1996 թվին, ներառում է նախկին Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արագածի շրջանները: Մարզի 72 համայնքում բնակվում են դարերով այստեղ ապրած հայերի ինչպես նաև 1828-30-ական թվականներին Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, Մուշից, Վանից, նաև՝ Հին Բայազետից, Խոյից և այլ վայրերից վերաբնակեցվածների սերունդներ: 20-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսերից այստեղ են հաստատվել նաև 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից փրկված սասունցիներ, մշեցիներ:

Ինչպես հիշատակում է Վ.Պետոյանը՝ «1916 թ. ռուսական բանակի Մուշ մտնելու ժամանակ Սասունի անտառներում և քարայրերում, Անդրքում և Գեղիեգուզանում ապաստանած մոտ 10 հազար սասունցի հայեր, իմանալով ռուսական բանակի՝ Մուշը գրավելու մասին, 1916 թ. մարտ ամսին գալիս միանում են ռուսներին, ազատվում և տեղափոխվում Կովկաս և բնակվում Աշտարակի և Թալինի լեռնամասային գյուղերում»²:

Արագածոտնի մարզ կազմակերպած մեր գիտարշավների արդյունքում արձանագրել ենք, որ Սասունի բարբառով խոսել են և այժմ էլ, թեև զգալի փոփոխություններով, շարունակում են խոսել Աշտարակի Ուջան, Սասունիկ, Ավան և Լեռնարոտ, ինչպես նաև Թալինի շրջանի Աշնակ, Իրինդ, Շղարշիկ, Վերին և Ներքին Սասնաշեն, Վերին և Ներքին Բազմաբերդ, Ագարակ, Պարտիզակ, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Դիան, Ոսկեթաս, Զովասար, Դավթաշեն գյուղերի բնակիչները, որոնք ծագումով պատմական Հայաստանի Սասունի գավառից են:

Սույն հոդվածի շրջանակներում մենք կներկայացնենք Արագածոտնի մարզի Աշտարակի և Թալինի շրջաններում բնակվող սասունցիների խոսվածքներում գործառող՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունները: Այս բառանունները կներկայացնենք ըստ մեր «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում»³ ուսումնասիրության դասակարգման՝ որպես բուն ազգակցական հարաբերություններ արտահայտող և միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանուններ՝ առանձնացնելով դրանցից առավել յուրահատուկները:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 18Դ-6Ե302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 7:

³ Տե՛ս **Հ.Խաչատրյան**, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009:

Իբրև կենսաբանական և հասարակական երևույթ՝ բուն ազգակցությունը պայմանավորված է ծնող, հարազատ, զավակ հարաբերություններով, որտեղ առաջին շարքում են, իհարկե, *մայր* և *հայր* բառերը:

Մայր: Սասունի բարբառում *մայր* հասկացության դիմաց բնիկ հայերեն *մայր* բառի՝ ա>է հնչյունափոխությամբ *մէր* հնչաձևից բացի գործածական են նաև *մամ*, *դադէ*, *դայօ* բառանունները:

Ըստ Հ.Աճառյանի՝ *մամ* բառանունը փոխառություն է հունարեն *μάμμα*, *μάμη* «մեծ մայր մամ» բառից⁴: Այնինչ Գ.Ջահուկյանը կարծում է, որ հայերենի բարբառներում պահպանված են հնդեվրոպական արմատական ձևեր, որոնք բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում, և դրանցից մեկն էլ համարում է *մամ* բարբառային բառը, որը, ըստ նրա, մանկական կամ փաղաքշական բնույթի է՝ չբացառելով նաև որոշ տարածքներում խառնում (կոնտամինացիա) հունական և պարսկական ձևերի հետ⁵:

Սասունի բարբառում վկայված է *մամ* հնչաձևը, իսկ Հազգոյում՝ նաև *մ՞մ*-ը, որոնք այսօր էլ գործածական են Արագածոտնի մարզի հիշյալ բնակավայրերի խոսվածքներում: Կոչական ձևերն են *մամօ*, *մամէ*:

Թեև Սասունի բարբառում առկա *մայր* հասկացության *դադօ* բառանունը վկայված չէ հայ մատենագրության մեջ, սակայն Գ.Ջահուկյանը այն համարում է բարբառային հնաբանություն՝ բխեցնելով հնդեվրոպական *dhe-dh(e) (հմմտ. շվեյց. *daddi* - «հայրիկ») արմատից⁶:

ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերում *դադօ* բառը փաստված է *դուդու*, *տուդու*, *դադէ*, *տադէ*, *դ՞դէ* հնչատարբերակներով, որոնք առկա են հիմնականում արևմտյան խմբակցության բարբառախմբերի խոսվածքներում: Բառանունը Արագածոտնի մարզի սասունցիների խոսվածքներում փաստված է *դադէ* հնչատարբերակով: Բարբառային նյութի քննությունից պարզվում է, որ *դադօ* բառի իմաստային դաշտում տեղաշարժեր են կատարվել «հայր» իմաստից «մայր» իմաստին, անգամ «մայր»-ից՝ «բույր» իմաստին, և կամ հակառակը: Նույնիսկ դժվար է հստակ ասել, թե *դադօ* բառի սկզբնական իմաստը որն է եղել:

Սասունի բարբառում գործառող «*մայր*» հասկացության *դայո* բառանունը փոխառյալ բառ է համարվում:

Դէյա, *դայօ*, *դայա* բառերի համար ռուս-թուրքերեն բառարանում նշված է «կերակրող» իմաստը, և ստուգաբանորեն աղերսներ ունի *դայակ* բառի հետ⁷:

Ըստ Հ.Աճառյանի՝ *դայակ*՝ «ստնտու, ծծմայր» իմաստով բառը պահլավական՝ *dayak*, պարսկական *daya* կամ *dayi* ձևից է առաջացել⁸, և գիտնականը հավելում է նաև,

⁴ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ.3, Ե., 1977, էջ 242:

⁵ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան* (այսուհետ՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 275:

⁶ Տե՛ս նույնը, էջ 275:

⁷ А.Н.Баскаков, Н.П.Голубева, и.т.д., *Турецко-русский словарь*, М., 1977, стр. 211:

⁸ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 628:

որ այն իրանյան փախառություն է համարվում՝ իրանական *-եսկ* մասնիկով ձևավորված լինելու պատճառով: Աճառյանը հիշատակում է նաև բնիկ հայերեն բառ համարվող *դիեկ* արմատը՝ «ծիծ ուտել, մոր կաթը ծծել» նշանակությամբ՝ առաջացած *dhei, dhe, dhi* արմատներից, որոնցից էլ, ըստ Աճառյանի, կարող էր ածանցվել բառի հայերեն համարժեքը⁹:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հայերենի բարբառներում գործառող *դէյա, դայէ, դայօ, դայա* հնչաձևերում թերևս առկա է հնդեվրոպական *դի* արմատը՝ պարզապես կոչականի գործառությամբ:

Գրաբարյան *մարու*՝ «խորթ մայր» իմաստով հիշյալ տարածաշրջանում արձանագրված է *դամօռի*՝ բառանունը¹⁰, որը, ամենայն հավանականությամբ, փոխառություն է քրդերենից:

Հայր: Իբրև *հայր* հասկացության բառանուն Արագածոտնի մարզում ապրող սասունցիների բարբառում գործածվում են *բար, բարօ* զուգաբանությունները:

Ինչպես Հ.Աճառյանը, այնպես էլ Գ.Զահուկյանը *պապ*՝ «մեծ հայր» իմաստով բառանունը փոխառյալ են համարում պիլ. **pāp* ձևից, հմմտ. պիլ. *pāpak (հայրիկ)*, իսկ «հայրապետ» իմաստով *պապ* բառանունը ծագումնաբանորեն բխեցնում են հունարեն *παπας* «հայր», լատ. *papa, papas*, «հայր, հոգևորական, պապ» բառերից¹¹:

Բարբառային հայերենում *պապ* բառը գործառում և՛ *պապ (պապիկ)*, և՛ *հայր* իմաստներով: Ինչպես վկայել ենք, խնդրո առարկա խոսվածքներում բառանունը դրսևորված է «հայր» նշանակությամբ և բարբառին բնորոշ բառասկզբի խուլերի ձայնեղացմամբ *պապ>բար*, իսկ կոչական ձևն է *բարօ* (*Ըմ բար* փեղ մը ուներ, վըր ըզդէխէն մէզներ, էրզընկի աստիսիր զըխառնիր իրուր, *Բարօ*, ա՛յ բարօ, մըր դուն հան՝ հա՛):

Տատ, պապ: Միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումների առաջին շղթան կազմում են *պապ* և *տատ* բառերը: Սասունի բարբառի հիշյալ խոսվածքներում *տատ* և *պապ* հասկացությունների դիմաց վկայված են *դադօ, ճօճօ* և *ճօքօ* ուշագրավ բառանունները:

Հայերենի բարբառներում որպես «տատ» հասկացության նշանակելիներ շատ հաճախ մեծ ածականով որոշիչ-որոշյալ կապակցային ձևեր են փաստված, ինչպես՝ *մինձ մար, մինձ արա, մինձ անա* և այլն¹²: Անգամ Կոզենի բարբառում «տատ» հասկացության բառանուն է փաստված *մէծըիկ*-ը:

Ինչպես գիտենք՝ բարբառային հայերենում լայն գործածություն ունի մեծ բառի ջօջ հոմանիշը: Այստեղից էլ *ջօջ մամ, ջօջ ադէ* բառակապակցային արտահայտությունները, և սրանից էլ, ինչպես *մէծըիկ* բառի դեպքում, բառիմաստային

⁹ Տե՛ս նույնը, էջ 668:

¹⁰ Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 115:

¹¹ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.4, Ե., 1979, էջ 25: Գ.Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 621:

¹² Տե՛ս Հ.Խաչատրյան, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 92:

բևեռացումով ձևավորվել է *ջօջօ* բառը (Սասունի բարբառին բնորոշ ձայնեղների խլացմամբ՝ *ճօճօ*)՝ «տատ» նշանակությամբ (Ըմ *ճօճօն* հըրիիր դըրեգան գընիգ ը, հեկյատ մը չըկինը ըսսէ):

Ըստ ՆՀԲ-ի՝ *ջօջ*-ը ռամկական բառ է համարվում՝ մեծ, առաջին նշանակությամբ¹³: Հ.Աճառյանը փաստում է, որ դեռևս Ե դարից մեզ է ավանդվել *ջօջ* արմատից բաղադրված Ջոջիկ անձնանունը¹⁴, և մերժում է ուտիերենի հետ նրա կապը, քանի որ *ճոճա* ուտիերենում ոչ թե մեծ կամ ավագ է նշանակում, այլ՝ կարմիր: Արագածոտնի մարզի հիշյալ բարբառում *տատ* իմաստով գործառում է նաև *դադո* բառանունը (Ըմ *դադոն* հըրիիր դարեգան ը):

Դադո հնդեվրոպական արմատը, որը, ինչպես նշել ենք, թեև արձանագրված չէ հին մատենագրության մեջ, սակայն արևմտյան խմբակցության Մուշի, Ալաշկերտի, նաև Սասունի խոսվածքներում գործառում է նաև «*տատ*» նշանակությամբ:

Հարկ է նշել, որ հայերենի որոշ բարբառներում երբեմն հստակորեն տարբերակվում են մոր և հոր մայրերը, որն էլ պատճառ է դարձել բարբառներում *քեմմամա* նկարագրական բարդ բառի կաղապարի ձևավորման՝ իհարկե, հնչյունական, բառակազմական յուրօրինակ տարբերակներով: Այս տրամաբանությամբ էլ Սասունի բարբառում գործառում է *տատ* հասկացության *խալմամ* բառանունը: Քրդերեն *խալո* բառը «քեռի» է նշանակում, որից էլ՝ *խալմամ*՝ *քեռու մայր*:

Սասունցիները, դարեր շարունակ ապրելով քրդերի հարևանությամբ, շատ հաճախ իրենց բարբառային բառապաշարում գործառում են նաև քրդերեն բառեր: Դրանց մեջ քիչ չեն նաև ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը, որոնցից վերն արդեն հիշատակեցինք *խալո*-ն: Բարբառս քրդերենից փոխառել է նաև «*պասպ*» հասկացության *ճօթօ* բառանունը (Ըմ *ճօթօն* քվըրտիծ):

Հորեղբայրը երկակի միջնորդավորված արյունակցական հարաբերությունների երկրորդ իմաստային շղթայի բառանվանում է: Նկարագրական կաղապարով առաջացած այս բառանունը ինքնին մատնանշում է ծնող հարաբերության (այստեղ՝ հայր) միջնորդավորումը համաձին հարաբերության արական սեռի եզրով՝ *հոր+եղբայր*:

Սասունի բարբառում *հորեղբայր* հասկացության բառային դրսևորումների շարքում առանձնանում են *հօխպէր*, *հօպիգ*, *հօպօ*, *սպօ* բառանունները:

Ինչպես գիտենք, բարբառային հայերենում *հորեղբայր* բառանունը վկայված է բազմաթիվ հնչյունական տարբերակներով՝ *խօրօխպէր*, *հըրօխպէր*, *հօրպօր*, *դօրփէր*, *հէրբար*, *հօխպէր*, *հօպար* և այլն:

Ըստ բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ արևմտյան տարածքի հարավկենտրոնական բարբառախմբի խոսվածքներում, որոնցից է նաև Սասունի բարբառը, առկա է *հորեղբայր* բառի *հօխպէր* հնչատարբերակը, որում *հայր* բառի սեռական հոլովաձևում՝ *հօր*, տեղի է ունեցել

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1837, էջ 675:

¹⁴ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.4, էջ 131

բառի վերջին *ր*-ի անկում, իսկ *եղբայր* բառի *ախպէր* տարբերակում էլ առաջին հնչյունի անկում, և արդյունքում՝ *հօխպէր* հնչաձևը:

Արագածոտնի մարզի՝ ծագումով սասունցիների խոսվածքներում գործածական են նաև *հորեղբայր* բառի համառոտված *հօպիգ*, *հօյօ* կոչական բառաձևերը:

Սասունի բարբառում գործառում է նաև *հորեղբայր* հասկացության *սայօ* բառանունը (Ըմ *սայօն* հերսօղավ կընած): Ի դեպ, հայերենի բարբառներում *սայօ* և *սփի* բառանունները դրսևորված են որպես տարբեր հասկացությունների նշանակելիքներ. *սայա*, *արա* հնչաձևով՝ որպես «մայր» (Կարինի բարբառ), *սպի*, *սփի*, *արա*, *սայօ*, *սփօ*, *սփու*՝ «հայր»:

Կարծում ենք՝ Սասունի բարբառում *սայօ* բառանվան՝ «*հորեղբայր*» իմաստով գործածությունը իմաստային տեղաշարժի արդյունք է՝ *հայր* իմաստից՝ *հորեղբայր* իմաստին:

Հայերենում խնամիական ձեռքբերովի ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումներից են *սկեսրայր-ը* և *սկեսուր-ը*:

Սկեսուր-ը բնիկ հայերեն բառ է. հնդեվրոպական նախալեզուն զանազանում էր իգական **suekru*՝ *սկեսուր* և արական **suekuro*՝ *սկեսրայր* բառանունները: Հնդեվրոպական **suekiru* ձևից էլ առաջացել է հայերենի *սկեսուր-ը*¹⁵: Հարկ է փաստել, որ հայերենում *սկեսրայր* բառի հնդեվրոպական նախաձևի արականը չի պահպանվել, այն հետագայում ձևավորվել է *սկեսուր+այր* բառաբարդման կաղապարով:

Բնիկ հայերեն բառերի կազմում հատկապես ազգակցական բառաշերտը դարերի ընթացքում փոփոխության գրեթե չի ենթարկվել կամ էլ կրել է մասնակի փոփոխություններ: Այդպես են նաև *սկեսուր* և *սկեսրայր* բառանունները, որոնք աչքի չեն ընկնում բառագուգաբանությունների բազմազանությամբ: Դրանք, ինչպես բարբառների մի սովոր խմբում, այնպես էլ Սասունի բարբառում, դրսևորվում են բառասկզբի *ս*-ի անկումով՝ *կեսուր*, *կեսրար*, *կեսրեր* (Սասունի բարբառում՝ *գեսրեր*, *գեսուր* հնչաձևերով: Օրինակ՝ *Գեսրեր* գուր հարս շաղ գուզեր):

Արագածոտնի մարզի սասունցիների խոսվածքներում արձանագրել ենք նաև միջնորդավորված ձեռքբերովի ազգակցական հարաբերություններ արտահայտող յուրօրինակ այնպիսի բառանուններ, ինչպիսիք են *բարընդադ-ը*, *բարընմամ-ը* *բարընբար-ը*¹⁶:

Մեր՝ «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» աշխատության մեջ, անդրադառնալով *սկեսուր* հասկացության բառանվանումներին, փաստել ենք, որ Կիլիկիայի միջբարբառախմբի Մարաշի և Հաջընի բարբառներում գործածվել են *բարմար*, *բայմայ* բառանունները, որոնք

¹⁵ А.Асмангулян, *История армянских терминов родства*, Е., 1983, стр. 33

¹⁶ Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, էջ 107:

դիտարկվել են որպես *պարոն մայր* բառակապակցության համառոտամբ առաջացած բառանուն (ամփոփում)¹⁷:

Կարծում ենք՝ Սասունի բարբառում վկայված *բարընդադ, բարընմամ* բառանունները ձևավորված են նույն տրամաբանությամբ, այսինքն՝ *պարոն դադ* (*դադո՝ մայր, պարոն մայր*), *պարոն մամ* (պարոն մայր): Թերևս սասունցիների ընտանիքներում *սկեսուրը* այնքան հարգանքի ու մեծարման է արժանացել, որ ստացել է *պարոն* պատվանունը: Հարկ է հիշել նաև, որ Թիֆլիսի բարբառում «*տիկին*» հասկացությունը դրսևորված է *աղջիկ պարոն* բառակապակցությամբ:

Արևմտյան իմբակցության մի շարք բարբառներում և խոսվածքներում վկայված է *սկեսրայր* հասկացության *բարոնբար* բառանունը (Բեյլան՝ *բարընբոբ*, Հաջըն՝ *բայընբոբ*, Մարաշ՝ *բարընբոբ*, Եդեսիա, Ասլանբեկ՝ *բարընբար*, Տիգրանակերտ՝ *բօրընբօ*): Հիշյալ բառանունը *պարոն+բար* կաղապարով ձևավորված բարդություն է: *Պարոն* հարգական դիմելաձևի բառը, որը, ինչպես գիտենք, ֆրանսերենից փոխառություն է, կցվել է «հայր» իմաստով *բար* բառին, և արդյունքում ստացել ենք *բարոնբար* բառանունը: Բուն Սասունի բարբառի Գելիեզուզանի խոսվածքում *գեսրեր* բառին զուգահեռ գործածվել է նաև *բարընբար* բառանունը:

Ձեռքբերովի ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանվանումների իմաստային շղթայի բառանուններից է նաև *հարս*-ը:

Սասունի խոսվածքներում բացի բնիկ հայերեն *հարս* բառից գործառում է նաև «*հարս*» հասկացության՝ արաբերենից փոխառյալ *արուս* բառանունը: Ի դեպ, վերջինս *առուս* հնչատարբերակով գործածվել է նաև Տիգրանակերտի բարբառում¹⁸:

Սասունի բարբառում *հարսնաքույր* (*կամ նորահարսի հետ գնացող կին*) հասկացության դիմաց վկայված է *բօրբուդիկ* ուշագրավ բառանունը¹⁹:

ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերում Համշենի խոսվածքներում *տիկնիկ* հասկացության դիմաց արձանագրված են, *հայս* (հարս) (տե՛ս տետր հ. 252) և *բուրբիզ, բուրբադիզ, բուրբադնիզ* բառանունները:

Հոմանիշների բառարանում *նուրի* (որպես ծիսական տիկնիկ) բառի զուգաբանություններ են փաստված *պուպլատիկին*-ը, *պուպրատիկին*-ը²⁰, որոնք, մեր կարծիքով, աղերսվում են Համշենի բարբառում *տիկնիկ* հասկացության դիմաց դրսևորված *բուրբադիզ, բուրբադնիզ* բառազուգաբանություններին, որոնց բաղադրիչներն են *պուպր(իկ)+տիկին* բառանունները՝ պարզապես բարբառային հնչատարբերակներով: Ի դեպ, ըստ Ս.Վարդանյանի վկայության՝ *բուրբիզը* Համշենի բարբառում

¹⁷ Տե՛ս **Հ.Խաչատրյան**, *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009, էջ 171:

¹⁸ **Ա.Հանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 160:

¹⁹ **Վ.Պետոյան**, *Սասունի բարբառը*, էջ 107, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.Ա, Ե., 2001, էջ 168:

²⁰ **Ա.Մուքիայան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 496:

ծիսական տիկնիկն է²¹: Թերևս *նուրի* բառի հոմանիշ *բուրբաղիզ*-ը ծիսական տիկնիկ նշանակությամբ է նախապես գործածվել՝ հետագայում դառնալով ուղղակի «տիկնիկ» հասկացության նշանակելի: Գուցե դա պատճառը, որ Հ.Աճառյանը *բուրբաղիզ*, *պուպրիկ*՝ Խրբ. *պուրպիկ* բառանունները դիտարկել է որպես «խամաճիկ, երեխայի խոճիկ՝ տիկնիկ» հասկացությունների բառագուգաբանություն²²:

Ըստ մեր դիտարկումների՝ ոչ միայն Համշենի բարբառում առկա *բուրբաղիզ*, *բուրբաղնիզ*, *բուբրիզ* բառանունները, այլև Սասունի բարբառում գործածված *բ՞րբուղիկ*, *բ՞րբաղեկ* բառանունները ծագումնաբանորեն առնչակից են *պուպրիկ* բառանվանը, որը մի դեպքում բառիմաստային ճյուղավորմամբ Համշենի բարբառում ստացել է «խամաճիկ, խրճիկ, տիկնիկ» նշանակությունները, իսկ մի այլ դեպքում Սասունի բարբառում փոխաբերացմամբ ձեռք է բերել «հարսնաքույր» իմաստը:

Ինչպես վերևում փաստեցինք, Համշենի բարբառում «տիկնիկ» հասկացությունը դրսևորված է նաև *հարս* բառանվամբ, որն էլ մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ հնարավոր է *բ՞րբուղիզ* բառի՝ «տիկնիկից» (ինչպես համշենցիներն են ասում՝ հարսից) «հարսնաքույր» բառիմաստային զարգացումը:

Ձեռքբերովի ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերի շարքում առանձնացրել ենք Սասունի բարբառում գործառող ծիսական հիմքով առաջացած *կնքահայր* և *կնքամայր* բառանունները:

Կնիք բառը համարվում է սեմական փոխառություն²³: *Կնիք* -> *կնուք* -> *կնունք+հայր* և *կնունք+մայր* արմատների բաղադրությամբ ձևավորվել են *կնքահայր* և *կնքամայր* բառանունները: Բարբառային հայերենում հանդիպում են *կնունք+հայր*, *կնունք+ավոր*, *կնունք+պապ*, *կնունք+մայր*, *կնունք+կին* բաղադրիչներով բառաբարդման ու ածանցման տարբեր ձևերն ու աստիճանները:

Կնունք+պապ կաղապարով բառանունը գործառում է բարբառների արևմտյան խմբակցության Կիլիկիայի միջբարբառախմբի, Անտիոքի, Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի խոսվածքներում: *Կնքապապ* բառը *կ*-ի անկումով Խարբերդում, Բալուում դարձել է *ընքաբաբ*, Մարաշում ա>օ հնչյունափոխությամբ՝ *զընքաբօբ*, Բեյլանում՝ *ընքաբօբ*, Չմշկածագում *կ*-ի անկումով և գաղտնավանկի լիաձայնությամբ՝ *ինքաբաբ*:

Արագածոտնի մարզի սասունցիների խոսվածքներում «*կնքահայր*» հասկացությունը դրսևորված է *կնունք+ավոր* կաղապարի *քըվոր* տարբերակով, որում *կնունք*

²¹ Ս.Վարդանյան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 117, 278:

²² Հ.Աճառյան, *Հայերեն գալատական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 926:

²³ Գ.Զահուկյան, *ՀԼՊ. ՆՏ*, էջ 457:

արմատից մնացել է միայն վերջնահանգ *ք*-ն, որին էլ կցվելով *-վոր* ածանցը դարձել է *քրվոր* (Մըր *քրվոր* էգավ):

Սասունի բարբառի որոշ խոսվածքներում առկա են նաև *կնքահայր* հասկացության ուշագրավ *քաքաք*, *քըքաք* բառանունները, որոնցում ևս *կնունք* բառը մաշվել է՝ մնալով միայն *ք* վերջնահանգը, որն էլ *պապ* արմատի հետ միանալով՝ այս անգամ դարձել է *քըքաք*:

«*Կնքամայր*» հասկացությունը հիշյալ տարածաշրջանում դրսևորված է *քրվորգին*, *գընքամամ*, *քըմամ* բառանուններով: Ինչպես *քըքաք* բառի դեպքում արձանագրեցինք, այստեղ էլ *կնքունք* բառի *ք* վերջնահանգը կցվում է *մամ* արմատին, և ստացվում է *գընքամամ* բառի *քըմամ* տարբերակը: Հարկ է փաստել, որ *քըմամ* և *քըքաք* բառանունները կղզիացված են միայն Սասունի բարբառում:

Այսպիսով՝ Արագածոտնի մարզի Թալինի և Աշտարակի շրջաններում բնակվող սասունցիների բարբառային բառապաշարում գործառող ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների քննությունից պարզ է դառնում, որ սասունցիները հնարավորինս անաղարտորեն պահպանել են մայրենի բարբառի յուրահատուկ բառանունները, որոնց մեջ կան և՛ բնիկ հայերեն բառեր, ինչպիսիք են՝ *մայր*, *սկեսուր*, *հորեղբայր*, և՛ բարբառային հնաբանություններ՝ *դադո*, *մամ*, և՛ փոխառություններ՝ *պապ*, *խալօ*, *խալմամ*, *ճօբօ*, *արուս* և այլն: Բարբառում դրսևորված են նաև բառակազմական յուրօրինակ կաղապարներով բառանուններ, ինչպիսիք են *բարընդադր*, *բարընբաբր*, *քըքաբր*, *քըմամր*, *ճօճօն* և այլն:

Hasmik Khachatryan: Dialectal representation of words expressing kinship relations in the Aragatsotn region. The article studies the unique words expressing kinship relations used in the dilialectal vocabulary of Sassounians (people from Sasoun) residing in the Talin and Ashtarak regions of Aragatsotn marz, including the following: *դադե*, *դայօ* [dade, dayo] (mother), *դադօ* [dade], *ճօճօ* [chocho], *բարընդադ* [barndad], *բարընմամ* [barnmam] (grandmother), *ճօբօ* [chobo], *բարընբաբ* [barnbab] (grandfather), *քըքաբ* [qybab] (godfather), *քըմամ* [qymam] (godmother) etc.

Асмик Хачатрян. Диалектная картина лексем, обозначающих родственные связи, в Арагацотнской области. В рамках данной статьи нами исследованы наиболее своеобразные словоформы, обозначающие родственные связи и употребляющиеся в диалектном лексиконе сасунцев, живущих в Талинском и Аштаракском районах Арагацотнской области, в частности: даде́, дайо́ (мать), дадо́, чочо́, барэндáд, барэнма́м (бабушка), чобó, барэнба́б (дед), кэба́б (крестный), кэма́м (крестная) и др.